

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Վահան Հովհաննիսյանի, Արծվիկ Մինասյանի, Արտյուշ Շահբազյանի, Ռուզաննա Առաքելյանի և Արա Նռանյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ:

Պետք է նկատի ունենալ այն հանգամանքը, որ ներկայումս կենսաթոշակային օրենսդրությամբ որևէ կատեգորիայի անձանց կենսաթոշակին հավելում չի տրվում, ինչը համապատասխանում է նաև հանրապետությունում իրականացվող կենսաթոշակային բարեփոխումների գաղափարաբանությանը:

Միաժամանակ՝ առաջարկվող փոփոխությունը, ըստ նախագծին կից օրենքի ընդունման հիմնավորման, կհանգեցնի նաև տարեկան շուրջ 700 մլն դրամի լրացուցիչ բյուջետային հատկացումների անհրաժեշտության, որը ներառված չէ ինչպես Հայաստանի Հանրապետության 2009 թվականի պետական բյուջեում, այնպես էլ՝ Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեի նախագծում: Նախագծի ընդունման դեպքում այն կմնա առանց ֆինանսական ապահովման:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը դեմ է ներկայացված օրենքի նախագծի ընդունմանը:

Համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 75-րդ հոդվածի՝ նախագիծը պետք է ընդունվի պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Մ. Մնացականյանը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Նախագիծ

Պ-745-27.10.2009-ԳԿ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«Գիտական եւ գիտատեխնիկական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին

Հոդված 1. «Գիտական եւ գիտատեխնիկական գործունեության մասին» 2000 թվականի դեկտեմբերի 5-ի ՀՕ-119 Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 19-րդ հոդվածի 3-րդ մասում «Պետությունը» բառից հետո լրացնել «տարիքային կենսաթոշակի իրավունք եւ» բառերը, իսկ «որի չափը եւ տրամադրման կարգը սահմանում է կառավարությունը» բառերը փոխարինել «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածով սահմանված մեծության՝ գիտության թեկնածուի համար ամսական 50 տոկոսի, իսկ գիտության դոկտորի համար՝ 100 տոկոսի չափով: Սույն մասով սահմանված հավելվածարները վճարվում են կենսաթոշակի հետ միասին՝ կենսաթաշակային օրենսդրությամբ սահմանված կարգով:» բառերով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՕՐԵՆՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Գիտական եւ գիտատեխնիկական գործունեության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու նպատակն է կյանքի կոչել դեռեւս 2000 թվականից նախատեսված, կենսաթոշակի իրավունք ունեցող գիտնականների (գիտական կոչում ունեցողների) այս իրավունքը: Առաջարկվող մոտեցումը հնարավորություն է տալիս նախ հստակեցնել վճարման չափերը եւ բացի այդ, սահմանել վճարման ընթացակարգ՝ կիրառելով կենսաթոշակային օրենսդրությամբ արդեն իսկ սահմանված նշանակման եւ վճարման նույնատիպ մեխանիզմը:

Օրինագիծը համահունչ է գիտաշխատողների սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման վերաբերյալ ՀՀ կառավարության կողմից հայտարարված քաղաքականությանը:

Ըստ մեր հաշվարկների խնդիրը վերաբերում է մոտ 3000 գիտության թեկնածուներին եւ դոկտորներին կամ պետական բյուջեից պահանջվող գումարը կկազմի մոտ 700 մլն. դրամ: